



Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 10 ֆր. Պալքանեան երկիրներ 50 Մէնթ, արտասահման 60 Մէնթ
Administration et Rédaction, H. N. GHAZAROSSIAN, 7, Rue Papère — MARSEILLE (France)

Թիի 7

Զ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1950

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԹԷՆՔԻ ՄԷՋ ՄԻՆԱԿ

Ուստի ա՛լ չկրնալով աւելի համբերել, աղէկ երեւցաւ մեզի մինակ Աթէնք մտալ: Ա. Թեո. Գ. 1.

Աթէնք այն ատեն իր 200,000 բնակչութիւնով հեծանաւան քաղաք մըն էր, որ վաւարանք կը նկատուէր գիտութեան, գեղարուեստի եւ կրօնքներու: Զատուածներու եւ չատուածութեան միջնաբերդն էր, ուր երեք հազար դից ու դիցուհիներու անուններ կը համբուէին բազում մեհեաններով: Հոն կը վաւաւրէին նկարիչներ, քանդակագործներ, բանաստեղծներ, գիտնականներ եւ բիւրաւոր դատաւարներ ինչպէս նաեւ հարուստ զբօսաշրջիկներ: Աթէնք թատրոններու եւ թատերախաղերու ալ կեդրոնն էր, ուր գեղարուեստի ու հաւատարմութեան մեծագոյն դէմքեր կուգային ցոյց տալ իրենց տաղանդները եւ դափնեպսակներ խլել 50—70,000 ներկաներու ծափահարութիւնով:

Աթէնք աշխարհի ուրիշ քաղաքներէն տարբեր վայր մըն էր Աթենացւոց համար եւ Աթենացիք տարբեր մարդիկ: Հոն միշտ Սոքրատեսի եւ Սոկրատեսի փիլիսոփաները կը չափուէին իրարու հետ իրենց թէգերը հրապարակ նետելով. առաջինը՝ բաղդը կը չատուածացնէր, իսկ երկրորդը՝ որովայնը՝ քսելով, ուտենք, խմենք, վաճառի վաղը պիտի մեռնինք:

Այս քաղաքին մէջ Պոլոս մինակ մնալ ստիպուած էր եւ հոն առաջին անգամն ըլլալով պիտի հնչեցնէր Աւետարանին արձանագոյն փողը, որ արդէն ամէն տեղ շրջաններուն գայթակղութիւն եւ քայքայութիւն յիմարութիւն եղած էր: Իրաւ առաջին ակնարկով

առանձինն անկարելի բան մը կը թուէր գործի սկսիլ, եւ սակայն գիտէր ալ թէ 200,000 հեծանաւաններու դէմ կենալու համար իր աջ կողմը կը կայնէր տիեզերքի եհովա Աստուածը:

Առանձինն կը քալէ անիկա Աթէնքի փողոցներէն, խոհուն եւ սրտի ծանր լուծով մը բռնաւորուած: Կը դիտէ նա քաղաքին տուններուն գեղեցկութիւնը, սիւնաւոր պատուհաններով յարկերը, կը դիտէ ժողովուրդը. դին կարգ ու սարքը, ամէն ինչ հոն կերպով կարգի դրուած ու ամէն մէկ պզտիկ անկիւն՝ գեղարուեստական: Կը բարձրանայ դէպի կապիտոլ, որքան յառաջ կ'երթայ, այնքան կը հնչէ իր վրայ մեղքի ծանրութիւնը, թէ եւ նոյնքան աւելի կը տեսնէ քաղաքաւորութեան յառաջդիմութիւնը: Կը մտնէ սքանչելի սրահներէն ներս, սիւնազարդ մարմարեայ ճեմակ աստիճաններէն բարձրանալով, կը կարգայ հետզհետէ անունները չատուածներու անունը սեղաններուն վրայ, Ապոլոնի, Բալլաս Աթէնէսի, Բագէսի, Ափրոդիտէի, Հէրմէսի եւայլն: Քիչ անդին կը գտնէ ան վերջապէս սեղան մը անպահօյճ առանց պատկերի կամ արձանի մը, որուն վրայ գրուած է. «Անծանօթ Աստուծոյն» (Գործ. ԺԵ. 23):

Օ, ի՛նչ քաղցր յուսոյ ալիք մը, լոյսի շողշողուն եւ ուրախ ճառագայթ մը յուզեց իր ներքին տրամուծութիւնը: Իրաւ Պոլոս դեռ առանձին է, քայց ուրախ

իր հոգին կը հրճուի իր ներսիդին: Աթենքի բնակչու-
թեան համար դեռ յոյս մը կայ: Ու ինքը խառնուած
շրջագայող խառնիճադոնճին մէջ կանգ կ'առնէ սեղ
մը, ուր հռետորներ իրենց փիլիսոփայական վերլու-
ծումները կը ներկայացնէին ունկընդիրներուն: «Քան-
զի մենք Անոր ցեղէն ալ ենք» (Գործ. ԺԷ. 28) կը
հնչէ իր ականջին: Ըստիկ կ'ընէ խօսող բանաստեղծին
ու կ'սպասէ իր կարգին յարուցեալ Քրիստոսը ներկա-
յացնելու: Եւ Աթենացիին՝ որ նորեւ բան մը երբեք
չլսուած չձգեր, կը քաշէ գայն Արիստագոսի ատեա-
նը, ուր նա անվրդով կարող ըլլար յայտնել իր բերած
բաները, որոնք իրաւ դեռ օտար էին Աթենացեաց:
Առաքեալը այս պատեհութիւնը կը գործածէ ցոյց տա-
լու աշխարհի վերջին դատաստանը եւ ամէն բանի
վախճանը, Աթենքի փառքին ալ վախճանը: Հոն հետե-
հետէ կը հաւաքուին հետաքրքիրներ եւ Պողոս բեմի
մը վրայ բարձրացած կ'արտասանէ շատ փափկա-
նկատ, միեւնոյն ժամանակ խորունկ եւ հուժկու քարոզ
մը որ մինչեւ այս օրս իբր նմոյշ մը կը հանդիսանայ, որ
նոյն օրէն սկսեալ ապագայ դարերուն մէջ հազարա-
ւոր քարոզներու նիւթ հայթայթած է. (Գործ. ԺԷ. 22-31):

Սքանչելի է դիտել թէ, Պողոս թէեւ առանձին,
բայց այդ առանձնութեան վրայ չի աւաղեր, այլ իր
առջեւը գտնուող եւ ահարկու վտանգներուն ու մահ-
ուան ստուերին մէջ եղող մեղաւորներուն սիրովն
արբշիւ՝ անձնուրացութեամբ անոնց վրայ գործովով
կը խորհի, անոնց աչքերը բանալու խաւարէն լոյսի,
որպէսզի կարող ըլլան տեսնել խաչեալ եւ յարուցեալ
Քրիստոսը, որ ըլլայ թէ կեանքի հասնին:

Այսու ամենայնիւ այդ սէրը զգաստ է: Չմօտե-
նար անոնց քննադատական ոգով մը ըսելով, «Ով Աթե-
նացիներ, դուք ձեր ամբողջ գիտութեամբն ու փիլի-
սոփայութիւնով, ձեր չաստուածներով ու ցոփ կեան-
քովը պիտի կորսուիք»: Ներկայ եռանդուն քրիստոն-
եաներէս շատեր այսպէս պիտի ընէինք թերեւս, եղիա-
յի նման Աստուծոյ նախանձաւորութիւնով լեցուած:
Բայց Պողոսի ոգը, անոր սիրող սիրտը, անոր մէջ բնա-
կող Հոգին այսպիսի բան մը չեն թուլատրեր: Հակա-
ռակ որ անոնք հեթանոսներ են ու սխալ լոյսի մէջ կը
քալեն, կը յարէ. «Ով Աթենացի մարդիկ, ամէն կող-
մանէ խիստ կրօնասէր կը տեսնեմ զձեզ, (հմր. 22).
միայն թէ չուզեր որ անոնք նոյն խաւարին մէջ մնան
անգիտակ, հապա այդ կրօնասիրութեան յատկութիւ-
նը ղեկավարել կ'ուզէ դէպի շիտակ ծամբան: Ինչ
սքանչելի դաս մը կայ հոս սորվելիք բոլոր Աւետա-
րանը քարոզողներուն: Դիմացինդ ունի շինութեան
ոեւէ հում նիւթ, զայն գործածէ Աստուծոյ շէնքը իր
մէջ շինելու պահուղ:

Նոյնպէս տեղային պարագաները աննկատ չառնէր
առաքեալը: Ձեր սուտ ու սխալ բանաստեղծներն ալ
կ'ըսեն թէ «Ընք Անոր ցեղէն ենք»: Հոս անոնք եւս
(գիտակցաբար կամ անգիտակցաբար) վկայութիւն

կուտան այդ Աստուծոյն համար, ուստի հաւատացէ՛ք
այդ Աստուծոյն: Այս է իր ներքին խորհուրդը:

Պողոս առաքեալ այս զգաստ սիրովը կրնայ ցոյ-
ներուն հետ ցոյն ըլլալ: Նա Աստուծոյ սքանչելի խոր-
հուրդը, (որ Յիսուս Քրիստոսով յայտնուած է) տրա-
մաբանօրէն բացատրելով՝ անոնց մտքին ու տրամա-
բանութեանը կը դիմէ ըսելով. «Աստի որովհետեւ
Աստուծոյ ցեղէն ենք, պէտք է որ այնպէս սեպենք
թէ Աստուածութիւնը նման ըլլայ ոսկիի կամ արծաթի
կամ քարի, որ մարդու վարպետութիւնով կամ խել-
քով քանդակուած է. (հմր. 29):

Պողոս առաքեալ որպէս մարդորս, պարագային
համաձայն տարբեր ուղկան կը նետէ, բայց ամէն մի-
ջոց գործածելէ յետոյ երբեք չքաշուի ցոյց տալու
անոնց տգիտութիւնը աստուածային բաներու մասին
եւ հասկցնելու թէ իրենց այս բոլոր կրօնասիրական
կերպերն ու միջոցները լոկ խարխալութեան են մու-
թին մէջ, մինչդեռ յուսաւորուելու էին, քանզի լոյսը
ծագած էր, տգիտութեան ժամանակը անցած էր, Աս-
տուծոյ Թագաւորութիւնը այլեւս ուժով կ'առնուէր
եւ ուժեղներն էին որ զանիկա սլափ ժառանգէին:
Չքաշուի նաեւ անոնց բացորոշապէս յայտարարելու
թէ օր մը կայ սահմանուած, որուն մէջ աշխարհս ար-
դարութեամբ պիտի դատուի Աստուծոյ որոշած ճա-
րուցեալին ձեռքով, եւ իրենք ալ պիտի դատապար-
տուին, եթէ առ Աստուած սպաշխարութեան արժա-
նաւոր պտուղ չբերեն (հմր. 30-31):

Ընք, հաւատացեալներս ալ ունինք մեր պզտիկ Աթենք-
ներն, ուր շրջապատուած ենք հակառակորդներով, ծաղրողնե-
րով, որոնք անդադար մեր հաւատքը, մեր համբերութիւնը փոր-
ծի կ'ենթարկեն: Այս շրջանակին մէջ յաճախ կ'անհրկինք, մեր
համբերութիւնն իսկ անհամբերութեան կը փոխուի, զմեզ ճնշող
եւ բոլորովին անհանգիստ ընող խօսքեր, զմեզ այնպիսի վիճա-
կի մը կը բերեն, որ մեր պաղարկումութիւնը վտանգուելու մօտ,
մեր խօսքերուն կապն իսկ կորսնցուցած կը շուարինք, պահ մը
հարցնելով թէ ի՞նչ էր մեր նիւթը եւ ուրիշ՝ սկսելու ենք հիմա:
Օ, որքա՛ն առանձին կզգանք զմեզ այսպիսի շրջանակի մը մէջ:

Մտքերնիս բերենք ուստի թէ Պողոս ալ Աթենքի մէջ
առանձին էր: Անկէ առաջ մեր Տէրը իր աշակերտներուն ըսաւ.

Դուք զիս պիտի թողուք, բայց ես միմակ չեմ, Հայրը իմ հետս է:
Արդ, ինչպէս Հայրը Որդիին հետս էր, ինչպէս Ս. Հոգին
Պապին մէջն ու անոր հետ էր, նոյնպէս է Նա մեր մէջ:
Չվախանաք վկայելէ, որքան որ պարագաները մեր հասողութե-
նէն բարձր ալ ըլլան: Բայց վկայենք զգաստութիւնով: Քիչ
խօսինք, բայց ի՞նչ որ մեր փորձառութիւնն է գայն խօսինք:
Ձխօսինք, եթէ չունինք բան մը խօսելիք, վասնզի խօսքերու
շատութիւնը օգուտ մը չբերիր. երբեմն խօսիլը արժանի է բայց
լսելը ոսկի: Ձխօսինք ինչ որ մեզմէ է, վասնզի ան շինարար
չէ, մեր Տէրն ըսաւ. «Առանց ինձի բան մը չէք կրնար ընել»:
Ուստի այսպիսի պարագաներուն մէջ սպասենք վայրկեան մը,
հարցնենք մեր Տէրոջ, ինքզինքնիս բոլորովին ենթարկենք Սուրբ
Հոգիի գերիշխանութեան, համաձայնինք Անոր հետ, ապա թոյլ
տանք որ ինքը խօսի իր փողին միջոցաւ:

Երանի՛ թէ Հայ հոգեւորներս վկայութեան այս գաղափարը
լաւ հասկնալինք:

ԻՆՉՊԵՍ ԱՊՐԵԼՈՒ Է ՅԱՂԹԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

ԳԼՈՒԽ ԺԳ.

«ԲԱՐՁՐԱԿՈՅՆ ԲՆԱԿԱՏՈՒԹԻՒՆԸ»

(Նար. 6րդ թիւն)

Երեք բաներու վատահ.

Բերնով խոստովանած հաւատքիս համեմատ չէի գործերս՝ «Բու հոգի Տէրը զրոյ ձգէ, ու Ան քեզ պիտի խնամէ» (Սաղմ. ԾԵ. 22) աստուածային հրամանը շատ անգամներ ուրիշներու յիշեցուցած էի, ինչպէս նաեւ Պետրոս առաքիւնի միջոցով Աստուծոյ աստուած հրամանը՝ «Զեր ամէն հոգը Անոր ձգեցէք, վասնզի Անիկա ձեզի համար կը հոգայ» (Ա. Պետ. 5, 7)։ Սակայն բոլորին առջեւ կեցած էի հոգի արտայայտութիւնը դէմքիս վրայ եւ ներքեւ փրկութեան վիճակիս համար, հակառակ անոր որ Աստուծոյ որոշ եւ յայտնի հրամանն էր՝ «Բանի մը համար հոգ մի ընէք»։ Պարզապէս սխալ մը կար իմ հոգեւոր վիճակիս մէջ։ Ինչ էր ան։ Պարզ անհաւատութիւն։

«Երեք բաներու կրնանք վատահ ըլլալ» կ'ըսէ Յրէնիս Բիւրի Հէյլըրհէլ։

Ա. Տէրը իրապէս կ'ուզէ որ մենք կատարենք իր պատուէրները։

Բ. Անոր բոլոր պատուէրները միշտ մեր օգտին համար են։

Գ. Աստուած կրնայ՝ եւ կ'ուզէ մեզի կործանութիւն տալ կատարելու Իր բոլոր պատուէրները, քանզի Անոր պատուէրները ծանր բան (անկրկնի) չեն։

Արդ կատարելապէս Քրիստոսի նուիրուած անհատ մը որ եւէ կերպով պատճառ ունի՝ հոգի ամենափոքր նշանի մը իսկ տեղի տալու։ Թէեւ ինծի համար անկարելի է այդ պատուէրը կատարել, բայց Քրիստոս Ինք կուգայ իմ մէջս բնակելու, իմ մէջս Իր կեանքը ապրելու եւ ընելու ինչ որ ես չեմ կրնար ընել։

Ճնճողուն ըստ կորմորաւանջին,
Շատ կ'ուզէի ես գիտնալ,
Ինչո՞ւ մարդիկ ասդին, անդին
Վաղվելով կը տառապին։

Կորմորաւանջը պատասխանեց,
Իմ կարծիքս է թէ մարդիկ
Չունին մեզի նման հայրիկ,
Որ հոգ ասդին կրկնից՝ իրենց։

Մենք գիտենք թէ մեր երկնաւոր Հայրը տուած է մեզի Իր որդին։ «Ալ ինչպէս անոր հետ ամէն բաները մեզի չափողեալ» (Հաովմ. Ը. 32)։ Ուրեմն ինչո՞ւ հոգ ընենք։

Եթէ իրապէս կը բաղձաս Յաղթական կեանքը վարելու, պէտք է քու հոգը Անոր վրայ ձգես, կամ աւելի շիտակ։ Անոր վրայ գլորես։ Որեւէ հոգի տեղի տալով կ'ապացուցանես թէ քու հոգեւոր կեանքիդ մէջ սխալ մը կայ եւ դուն կարող չես Քրիստոսի աւելի ծոխ կեանքը վայելել, քանզի Աստուծոյ վտառակութիւն մէջ թերի կը գտնուի։

Աստուծոյ խօսքին կը հաւատաս՞ք.

Ժամանակ մը առաջ խօսեցանք մեղանչելէ ազատելու կարելիութեան վրայ։ Երկուս որոշ վկայութիւններ կան Սուրբ Կրթին մէջ, որոնք են Եփես. 2. 16 «Եւ ամէն

բանին վրայ հաւատքին վազանը առէք, որով կարող պիտի ըլլաք չարին ամէն կրակոտ նետերը մարելու»։ Միւսն է Ա. Կոր. Ժ. 13, «Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու ձեր կարողութիւնէն աւելի փորձուելու, հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերելու»։

Իրապէս ասոնք խիստ հիանալի խօսքեր են։ Ինչ փառաւոր կարելիութիւն է որ մեզի կը մատուցուի, քանզի յիշեալ խօսքերը կը սխալեցնեն նաեւ անհաւատութեան մեծ եւ արմատական մեղքը։ Ամէն տրամութիւն եւ ամէն հոգ մեղքի արդիւնք են ու կարելի է ամէն մեղքի յաղթել մեր Տէր Յիսուս Քրիստոսի միջոցով։

Արդ հարցն է թէ մենք Աստուծոյ խօսքին կը հաւատաս՞ք թէ ոչ։ Աստուծոյ ծրագիրը չէ որ հաւատացեալին փորձառութիւնը յաղթութիւններու եւ պարտութիւններու շարք մը ներկայացնէ։ Եթէ իրապէս կը հաւատաս, մեր մէջ բնակող Քրիստոսը կարող է մեզի յաղթութիւն տալ եւ պիտի տայ ալ։

Նաեւ ուրիշ միջոցառական իրողութիւն մը կը գտնենք Սուրբ Գրքին մէջ։ Աստուած կ'ըսէ, «Իմ շնորհքս հերիք է քեզի» (Բ. Կոր. ԺԲ. 9)։ Ասիկա խոստում մը չէ, այլ իրողութիւն մը, անփոփոխ, անխախտ իրողութիւն մը։ Օր մը երբ Ժողովի մը մէջ այս կէտը շեշտեցի, Ժողովէն անմիջապէս յետոյ տիկին մը քովս եկաւ եւ ըսաւ, «Բայց դուք պայմանը չյիշեցիք»։ «Ինչ պայման» հարցուցի։ «Աստուծոյ շնորհքը մեզի հերիք ըլլալէ առաջ անշուշտ հաւատք ունենալու ենք», ըսաւ ան։ Սիրելի ընթերցող, քու հաւատք ունենալդ կամ չունենալդ չկրնար ու չփոխի իրողութիւն մը։ Աստուծոյ շնորհքը հերիք է քեզի, այս իրողութեան հաւատաս կամ ոչ։ Անուշաք որդիին հօրը տանը մէջ միշտ առատ էր հացը, նոյնիսկ երբ անիկա հեռու երկրի մը մէջ կը գտնուէր ու կը փափաքէր խաղերուն կերած եղջիւրներով իր փորը լեցնել։ Հոն հոցը կը բաւէր ու կ'աւելնար, անոր միակ ընելիքը երթալ եւ այդ առատութեան մասնակցիլ էր։

Աստուծոյ շնորհքը միշտ բաւական է։ Աստուած Ինք զը հոռտատէ այս իրողութիւնը։ Երբ յանկարծակի փորձութեան մը հանդիպին, ինչ կ'ընես, կոնք կ'առնես եւ անկէ ազատութիւն կը խնդրես, թէ Քրիստոսի կը նայես, որ Ինք քեզի յաղթութիւն պարգեւէ։ Մէկը ըսած է՝ «Երբ փորձուիս, մի հարցնիր թէ ինչպէս պիտի կրնաս ազատիլ անկէ, այլ հարցուր թէ ինչ պիտի շահես այդ փորձութիւնէն»։ «Աստուծոյ խաղաղութիւնը որ ամէն միտքէ վեր է, ձեր սիրտերը ու ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ Քրիստոս Յիսուսով պիտի պահպանէ» կ'ըսէ ուրիշ թարգմանութիւն մը։ (Փիլ. Դ. 7) Տէր Յիսուս կը բնակի մեր սրտին մէջ որպէսզի չարութեան խորհուրդն անգամ վանէ մեր մէջէն, տակաւին անկէ մեղք չգոյացած։ Երբ չար խորհուրդներ քեզ նեղեն, այս խոստումը քու կը ըրէ թէ մեր մէջ բնակող Քրիստոսը իրապէս կարող է մեր խորհուրդները պահպանելու։

«Իմ շնորհքս հերիք է քեզի» խօսքն էր որ Ուէպ Փիփլս այն քաջակիրթ, քրիստոնեայ պատերազմիկը Յաղթական կեանքին առաջնորդեց։ Սիրելի զաւակ մը կորսնցնելու ջանքով ինչ տխրութեան ենթարկուելէն յետոյ, անիկա ջանաց այս բնաբանով քարող մը պատրաստել։ Անիկա անկարող կը զգար իր բեռը Տէրը զրոյ ձգելու։ Ուրիշ ելլելով իր սաստիկ տագնապէն ազադակեց, «Ով Աստուած, ասիկա ճշմարիտ չէ, ես Բու շնորհքը բաւական չեմ գտնիր իմ այս ծանր ցաւիս մէջ, սակայն Դուն զայն բաւական ըրէ ինծի համար»։ Յետոյ

ծուռակի վրայ իյնալով կրկնեց իր աղօթքը: Մէյ մըն ալ իր արտասուքներուն մէջէն պատին վրայ տեսաւ լուսաշող սակղէն համար մը, որ «Իմ շնորհքս հերիք է քեզի» խօսքը կը ցոլացնէր: Կայծակի արագութեամբ անիկա հասկցաւ իր սխալը: Ինչ յիմար եմ ես, աղաղակեց անիկա: Ինչպէս կը համարձակիմ Աստուծոյ խնդրել, որ Անիկա ընէ բան մը, զոր արդէն ըրած է: Ոտքի պիտի ելլեմ ու Անոր վստահիմ: Ու անիկա իրաւ վստահեցաւ Աստուծոյ: Մենք ամէնքս գիտենք թէ Ուէյլ Փիփլի Յողթական կեանքի մուտքը ինչ նշանակութիւն ունեցաւ իրեն եւ ամբողջ աշխարհի համար: Պողոս որ գիտէր թէ Աստուծոյ շնորհքը հերիք է, կըցաւ հետեւեալ խոստումն ընել, «Իմ Աստուածս ձեր ամէն պիտոյքը պիտի լեցնէ իր ճիշտութեամբ չափովը փառքով (ինչ առատ քանձ) Յիսուս Քրիստոսի ձեռքովը» (ինչ Փրկիչ) Փեւ. Դ. 19:

Քրիստոսեայ բարեկամս, անկէ աւելի մեծ խոստում մը կրնա՞ս երեւակայիլ:

Մեր պիտոյքներուն լեցուիլը տեղի կ'ունենայ վայրկեանէ վայրկեան: Մանաւան օրէ օր կ'իջնէր երկինքէն: Սիրելի Քրիստոսեայ մը ըրած է՝ «Աստուած ինծի մեծ հարստութիւն մը տուաւ: Անիկա հազարաւորներ ու միլիոնաւորներ անցուց իմ հաշիւիս, սակայն ինծի տուաւ վճարելի գիրք մը այս մէկ պայմանով որ ճիշդ պէտք եղած պահուն որքան որ պէտք է, այնքան միայն գանձեմ»:

Մենք սորվելու ենք ամէն երկրայրկեանի Անկէ առնել մեր հոգեւոր կեանքը:

Ուրիշ պատուէր մըն ալ կայ, որ նոյնքան պարտաւորիչ է որքան «Գողութիւն մի ընեք» պատուէրը: Այս պատուէրն է «Ուրախ եղէ՛ք Տէրոջմով»: Այս խօսքին վրայ մտածա՞մ ես: Ձեռք ազգարարեր որ ուրախ ըլլանք Անոր հետ մէկ ըլլալուն համար, կամ մեղի տրուած շնորհքի միջոցներուն համար, կամ Անոր մեր մէջ գործածներուն համար, այլ ուրախ ըլլանք Իմ մով, ԻՐ ԱՆՁՈՎ միայն: Չէ՞ք տեսներ թէ ուրախութեան ինչ հիանալի պատճառ է ասիկա: Երբ մեր ուրախութիւնը կայանայ Անոր մեղքի մը վրայ մեղի տուած յաղթութեանը մէջ: Մեր ուրախութիւնը կ'անհետանայ, երբ ուրիշ մեղք է մը կը յաղթուինք: Երբ մեր ուրախութիւնը կայանայ Անոր մեր մէջ ու մեր միջոցով գործածներուն մէջ, շատ անգամ պիտի պատահի որ մենք գիտակից չըլլանք Անոր մեր մէջ գործածին ու երբեմն չափազանց վերացած ու երբեմն ալ չափազանց ընկճուած զգանք: Սակայն երբ մեր ուրախութիւնը կը կայանայ Իրեն, Իր Էութեանը մէջ, Անոր Էութիւնը չփոխուիր, եւ չփոխուիր նաեւ մեր ուրախութիւնը, այլ անիկա կը նմանի յորդառատ, մշտաբուրգ աղբիւրի մը. «Տէրոջմով ուրախ եղէ՛ք»: «Յիսուս Քրիստոսը, զոր դուք չտեսած կը սիրէք, զոր հիմա չէք տեսներ բայց կը հաւատաք, եւ ուրախ էք անպատեղի ու փառաւորեալ խնդութիւնով» (Ա. Պետ. Ա. 8): «Ան որ կը պարծենայ, Տէրոջմով թող պարծենայ» (Ա. Կոր. Ա. 31): «Ինծի հետ Տէրը մեծցուցէք»: Շատ անգամ մտածեցէ՛ք Անոր վրայ: Թող Անոր հրաշալի փառքը ըլլայ ձեր խորհուրդներուն եւ երգերուն նիւթը: Միշտ յիշեցէ՛ք թէ Ինք, այն փառաւոր անձնաւորութիւնը, կը բնակի ձեր սրտերուն մէջ հաւատաքով: Ու երբ Անիկա գերագոյն տեղը ստանայ ձեր մէջ, դուք կրնաք ըսել՝ «Ալ կենդանի եմ ոչ թէ ես, հապա Քրիստոս կենդանի է իմ մէջը», եւ ուրախութեամբ յարել՝ «Ինչ» համար ասրելը Քրիստոս է»:

(Շար.)

ՈՒԽՏՍ ԱՌ. ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԱՌԱՋԻ ԻՐ ՉԱԽԱԿԱՑ*

— 000 —

Մաճին վրայ դրրի ես ձեռքս դողդոջուն,
Չեմ նայիր ալ անցած անպատու օրերուն.
Ես ուխտեցի նայիլ միայն Յիսուսիս,
Եւ ընդունիլ Անոր բեռը իմ ուսիս:

Մաճին վրայ դրրի ես ձեռքս դողդոջուն
Ուխտս է հերկել փոքրիկ մաս մ'իր արտերուն,
Անցեալն անցած է ներկային ես փարած
Հոգ չէ թէ օրն արդէն իրկուն՝ միգամած:

Մաճին վրայ դրրի ես ձեռքս դողդոջուն
Տէրոջս համար գործել անխոնջ իմ կոչում,
Արիւնտան թէ՛ ոտքերս կիզիչ փուշեր
Միսիթարեն զիս բարբառին իր յուշեր:

Մաճին վրայ դրրի ես ձեռքս դողդոջուն
Թէ ծիծաղին մարդիկ տգէտ, նախատեն,
Յուցնել Փրկիչն իմ յաղթական գործս ըլլայ,
Որ կը ջնջէ մեղքին անէծք խաչին վրայ:

Մաճին վրայ դրրի ես ձեռքս դողդոջուն
Ըսելու թէ կայ Փրկիչ մը եռանդուն,
Ազատելու մեղաւորներն մարդկային,
Տալու անոնց կեանք մ'որ տեւէ յաւիտեան:

Մաճին վրայ դրրի ես ձեռքս դողդոջուն
Պիտի գործեմ: Ըլլայ զոհ մը կեանքս ողջիւն.
Չոհ կենդանի, որ ըլլայ թէ պիտանի
Արդիւնք մը գայ, հաւատարիմ Տէրս հաճի:


Մաճին վրայ դրրի ես ձեռքս դողդոջուն
Իղձս է լսել «Այն օրն» Տէրոջս ձայնն սիրուն.
«Ե՛կ ծառայդ իմ հաւատարիմ ու ազնիւ
Եւ մտիր արդ յուրախութիւն իմ ինդիւլ»:

Հետեւողութեամբ
Թօգաթլի Գ. ՉԱՔԱՐԵԱՆԻ

X

*) Սոյն ոտանաւորը շինուած է ծերունի Գ. Չաքարեանի եկեղեցւոյ անդամ ընդունութեան եւ իր հաւատքի դաւանութիւնը տալու անթիւ ի Մարտէյ, 7 ցունիս 1930 ին:

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԸՆՏԱՆԻՔԸ



Երկրիս վրայ քրիստոնեայ ընտանիքին նման պարզ, մտերմիկ ու անարատ ու եւ է հաստատութիւն մը գոյութիւն չունի։ Այսպիսի ընտանիք մը կազմողը լաւ կ'ընէ ու իրեն համար կ'ապահովէ ապաստանաւան մը, ամբողջ մը, եւ աշտարակ մը, որուն դէմ եմէ կեանքի բոլոր մակընթացութիւնները բախելու իսկ ըլլան, զանկա անառիկ կը գտնեն։

Կեանքի փոթորիկներու մէջ քրիստոնեայ ընտանիքի յարկը ապաստանարան մըն է իր անդամներուն։ Հովերը որչափ զօրաւոր փչեն, որոտումները գոռան, ու շանթերը փայլատակեն, դարձեալ ամէն ալ ապահով ու անվտանգ են։ Երբոր փոթորկալից ամպեր վեր բարձրանալով արեւը մթագնելու ըլլան, ու սառեցնող կամ խանձող ձախորդութեան հովերը փչելու ըլլան, քրիստոնեայ ընտանեկան յարկ մը ու նեցողը իր քայլերը դէպի հոն կ'ուղղէ, ներս կը մտնէ ու ապահով կ'ըլլայ։ Թող անձրեւը հարուածէ, ու ձիւնի սառեցնող պաղը շրջապատէ զայն, եւ կամ ցօղը զայն թրջէ, ներսիդին ամէն բան նոյնը կը մնայ — սէր, լոյս, յոյս եւ խաղաղութիւն։

Քրիստոնեայ ընտանեկան յարկ մը փարոսի մը հանգոյն՝ կեանքի ծովուն վրայ փոթորկէն տատանուող նաւաստիներուն ազդարարութեան փայլակներ կը ցամբէ։ Շատ մը յոգնած թափառականներ, կորսնցուցած իրենց ցամբան ժայռերու, դէմ գոռացող ալիքներու ձայնէն, թէեւ անախի, այսու ամենայնիւ ապահովութեամբ առաջնորդուած են վտանգաւոր խռիւթէ՝ քրիստոնեայ յարկէ մը ցողացող լոյսին միջոցաւ։ Աւ եմէ անհատ մը անոր յարկին տակէն մուտրելու ըլլայ, հին քաղցր աշտարակէն ցուացող լոյսը մոլորեալը ապահով տուն պիտի առաջնորդէ։

Քրիստոնեայ ընտանիքի անդամները, իր եղբայրները դաւարաւէտ ու տերեւախիտ ծառերով ծածկող գետակի մը հանգոյն, օրհնութիւններ կը տփռեն ջրա զին։

Քրիստոնեայ ընտանեկան յարկը բերդի մը կը նմանի, որուն դէմ թշնամեաց են կրակոտ նետերն իսկ ապարդիւն կը մնան։ Երանելի է այն ազգը որ այսպիսի բերդեր առատ ունի։ Խաղաղութեան աղբիւր մըն է քրիստոնեայ ընտանեկան յարկը։ Ջրկէ՝ ազգ մը իր քրիստոնեայ ընտանիքներէն ու անոնց ազդեցութենէն, ու անյապաղ ան ազգը պիտի վերադառնայ բարբարոսութեան մակարդակին։

Քրիստոնեայ ընտանեկան յարկը, ըլլայ մեծ սրողտային վրայ կառուցուած սլաքոտի մը կամ անշուք քաղաքամասերուն մէջ գրաւող հիւղակի մը մէջ, երկրիս վրայ երջանկագոյն ու էն դրախտաման վայրն է։ Հոն՝ ցիւղի, գոյնի կամ ազգութեան զանազանութիւն գոյութիւն չունի, ոչ ալ ուսեակի կամ անուսի տարբերութիւն, քանզի Քրիստոսն է հոն գահակալողը։ Երանելի՛ է այսպիսի ընտանիք մը կալմովը։

Լ (Թարգմանութիւն) ՎԱՀՐԱՄ ՍԱԼԻՊԵԱՆ Պէյրութ

ԲԱՅՑ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆ ԳՏԱՅ

Վալանդէն Բիւրդ արհեստով գող էր։ Այնքան վարպետ եւ յանդուգն, որ Հարազործներու շրջանակին մէջ հերոս մը կը նկատուէր։ Իր դասակարգի մարդիկը անոր մեծահամբաւ գործերուն կզմայլէին եւ իրենց բնակարաններուն պատերը անոր նկարներով կը զարդարէին։ Անիկա իր կեանքի քսան տարիները զանազան բանտերու մէջ անցուցած էր։ Բարձրահասակ, յաղթանդամ, խստազէմ, բնաւորութեամբ կոշտ եւ Հարկեզու էր, մանաւանդ երբ խնդիրը իրեն բնական թշնամիները — դատաւորներն ու բանտապահները — նախատելու զար։

Աւետարանիչ մը, որուն համբաւը զոռնդազունդ ունկնդիրներ կը հրապուրէր, Սէն-Լուի եկեալ։ Հոն տեղական մեծ օրաթերթ մը յայտարարեց թէ քարոզչին ուղերձները պիտի հրատարակէր. այսպէս Աւետարանին քարոզութիւնները Սուրբ Գրոց համարներով լեցուն՝ ամէն օր տպուեցան։ Լրագրողները կը ճգնէին մարդոց ուշադրութիւնը գրաւել իրենց թերթերուն վրայ, եւ ուստի լայն տեղ տուին այն համարներուն։ Այս միջոցին Բիւրդ կարգ մը Հարազործութեանց ի հետեւանս բռնուած, Սէն-Լուի բանտը նետուած, իր դատապարտութեան կ'ապասէր։ Խցիկին մէջ փակուած կը ջանար ձանձրութիւն փարատել իր պահապանները նախատելով, բայց անաւասիկ օրուն թերթէն օրինակ մը ներս նետուեցաւ։ Չայն առածին պէս իր աչքերը ինկան խոշոր տառերով վերնագրին վրայ. «Խնչպէ՞ս Փիլիպպէի բանտապետը ծուղակը ինկաւ»։ Ահաւասիկ իմ գործիս եկած բան մը, ըսաւ Բիւրդ, նստաւ եւ սկսաւ հեգնանքով կարդալ բանտապետի մը զլխուն եկածին վրայ գուարճանալով։

Բայց այս ընթերցումը թերթերու սովորական լեզուին չէր նմաներ։ «Ի՞նչ է այս կատակարանութիւնը» հարցուց ինքնիրեն. «Պօղոս եւ Շիղա որ կ'աղօթեն ու Աստուծոյ փառաբանութիւն կ'երգեն բանտին մէջ... երկրաշարժ մը... բանտին դռները բացուած... բանտապետը Պօղոսի եւ Շիղայի ոտքը ինկած... Ինձի ի՞նչ պէտք է ընել որ փրկուիմ։ Հաւատա Տէր Յիսուս Քրիստոսի ու պիտի փրկուիս. (Գ. Առաք. ԺԶ)։ ... Ո՛ր հասած են թերթերը որ այսպիսի տխմար ոչնչաբանութիւններ տպեն»։ Թուականին նայեցաւ, այդ օրունն էր, դեռ նոր տպարանէն ելած։ Բիւրդ զայն հայհոյանքով մը իրմէ մէկդի նետեց եւ վանդակափակ առիւծի մը նման սկսաւ փրփրել իր խցիկին մէջ։ Բայց յետոյ... նորէն ձեռք առաւ եւ յօդուածը ծայրէ ծայր կարդաց։ Միշտ աւելի խռոված՝ կրկին եւ կրկին կարդաց այս տարօրինակ պատմութիւնը, եւ յանկարծ այս թշուառ մարդուն զգայուն սիրտը անձանթ զօրութենէ մը բռնուած էր։

«Ի՞նչ կը նշանակէ այս, ես, քսան տարիէ ի վեր կախաղանի արժանի մարդ, երբեք ասոր նման բան

մը չեմ գտնում... փրկուի՞ր... ասիկա ի՞նչ կը նշանակէ... Իմ անասնական կոշտ կեանքս ի՞նչ ճնշիչ է հիմա: Եթէ ճշմարտապէս այս քարոզիչին Աստուածը գոյութիւն ունի՝ պէտք է որ զԱյն գտնեմ ես, նոյնիսկ եթէ զայն փնտռելը իմ կեանքս արժէ չենթի...»:

Դտա՛ւ զԱյն: Կէս զիշերին մօտ, ժամերով կծու խզի խայթէ, դառն զղջումէ, իր մանկութենէն ի վեր առաջին անգամը ըլլալով աղօթելէ յետոյ՝ Բիւրդ իմացաւ թէ Աստուած մը կայ՝ որ կրնայ եւ կ'ուզէ մէկ շունչով ջնջել մարդկային կեանքի մը ամենամութ տարեդրութիւնները: Յետոյ, իբր նոր արարած մը, նա առաւօտեան սպասեց: Փոխն ի փոխ արցունքներ եւ փառաբանութիւն տեղացիին բանտին խցիկին մէջ:

Առաւօտուն, նա իր պահապանը դիմաւորեց քաղցր խօսքով մը: Յետոյ ոտտիկան մը եկաւ զայն դատարան տանելու: Բիւրդ զայն ալ բարեկամաբար ընդունեց, եւ պատմեց անոնց թէ ինչպէս գիշերուայ ընթացքին Աստուած զինք գտած էր: Բոլոր ասոնք բանտապահին կասկածելի երեւցան, եւ իր ստորակարգ պաշտօնէակին ըսաւ. «Բիւրդին զգուշութիւն ըրէ՛ք. բարեպաշտի հովեր կ'առնէ կտր, որպէս զի փորձէ ճամբան փախչիլ»: Բիւրդ մը յետոյ Բիւրդ զառաւորներուն դիմաց ելաւ որոնք իր յանցանքը հաւատաւոր օրինաւոր փաստեր չգտնելով ստիպուեցան զայն ազատ արձակել:

Բայց նա ինքզինքը կորստեալ կ'զգար այս մեծ քաղաքին մէջ, ուր զինք իբր չարագործ աւազակ մը կը ճանչնային ամէնն ալ, եւ հիմա զժնդակ, թշուառ կեանք մը կ'սկսէր իրեն համար: Յունալով իր նախկին գործի կեղծոնէն կարելի եղածին չափ հեռու տեղ մը յաջողի՛ր՝ Բիւրդ Նիւ-Եօրք գնաց. բայց ի գո՛ւր: Վեց ամիս յետոյ Սէն-Լուի վերադարձաւ յուսալքուած, այստեամենայնիւ հաւատարիմ մնալով այն Աստուծոյն, զՈր ինք բանտի մը խցիկին մէջ գտած էր: Ի՞նչ մեծ եղաւ իր զարմանքը երբ վերադարձէն քիչ յետոյ հրաման մը ստացաւ դատարան ներկայանալու: Հոն գնաց շատ սրտնեղած: «Հին չարագործութիւններէս մին երեւան ելած ըլլալու է» կ'ըսէր ճամբան ինքնիւրեն, «Բայց եթէ իսկապէս յանցաւոր եմ, ճշմարտութիւնը պիտի ըսեմ ամբողջովին, սուտերու հետ այլեւս գործ չունիմ»:

Պաշտօնէան զինք քաղցրութեամբ ընդունեց:

«Ո՛ւր գացած էիր Բիւրդ»:

— «Նիւ-Եօրք»:

«Հոն ի՞նչ կ'ընէիր»:

— «Չանացի պատուաւոր գործ մը գտնել»:

«Դեռ հաստատ կը կենա՞ս այն կրօնքին վրայ, որու մասին ինծի խօսեցար»:

— «Այո՛», պատասխանեց Բիւրդ, զիմացիներն աչքերուն մէջ նայելով. «Շատ մը զժնդակ օրեր անցուցի, բայց Տէր Յիսուս Քրիստոս, իմ Փրկիչս, երեսի

փրայ չձգեց զիս. Ինք ինծի հոգ տարաւ»:

«Շատ լաւ. կրնամ քեզի ըսել թէ Նիւ-Եօրք կեցած միջոցիդ գաղտնի ոստիկաններս քու ամէն մէկ քայլդ քու շուքիդ նման հետապնդեցին: Կրօնասիրութիւնդ ինծի անվստահելի կ'երեւէր, բայց հիմա համոզուած ըլլալով թէ կեանքդ ճշմարիտ քրիստոնեայի մը կեանքն է՝ քեզի պաշտօն կ'ընծայեմ իմ հրամանիս տակ. կրնաս անմիջապէս գործի սկսիլ»:

Այդպէս ալ եղաւ: Բիւրդ իր գործին սկսաւ այնպիսի արիութեամբ մը, եւ անոր մէջ յարցաւորեց քրիստոնէական հաւատարմութեան այնպիսի տիրականութեամբ մը, որուն ամէն մարդ կ'սքանչանար: Ամենէն նշանաւոր մարդիկ անգամ, սկսան զխարկնին վար առնել երբեմնի այս գողը բարեւելու համար: Եւ յարգանքով կը ահապեցէին ու կը յարաբերէին անոր հետ: Բիւրդ ամէն մարդէ աւելի կը սիրէր այն աւետարանիչը՝ զոր Աստուած իր ապաշխարութեանը իբր միջոց գործածած էր: Սէն-Լուիէն կրկին անցնելու պահուն նա եկաւ Բիւրդը տեսնելու եւ գտաւ երբեմնի աւաղակը՝ դատարանի վերնախարկ սենեակնիւրէն մէկին մէջ, պահապան դրուած տուփ մը աղամանդներու վրայ, որոնց զինը 7,440,000 Ֆրանք կը հաշուէր: «Տեսէ՛ք պարոն», ըսաւ նա իր այցելուին, իրեն յանձնուած զահարեղէնները անոր ցուցնելով, «Տեսէ՛ք թէ ինչ կրնայ ընել Աստուծոյ շնորհքը գողի մը վրայ. բոլոր պաշտօնէաներուն մէջէն զիս ընտրեցին ասոնց պահպանութիւնը յանձնելու»: Տարիներ անցան, որոնց միջոցին Վալանդէն Բիւրդ ամէն երկու Սեւտարանը քարոզեց քաղաքին ամենաղաժա՛ն մարդոց եւ անոնց մէջէն շատեր, իրեն նման՝ մոլութեան լայն ճամբան ձգելով՝ Փրկչին Յիսուս Քրիստոսի հետեւեցան:

«Այս խօսքը հաւատարիմ է ու բոլորովին ընդունելութեան արժանի, որ Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու» (Ա. Տիմ. 1. 15):

Ո՛վ հոգի, Յիսուս Քրիստոս քեզի համար ալ աշխարհ եկաւ, զքեզ ալ փրկելու, Անոր համար չափէն աւելի գէշ չկայ: Աստուծոյ մօտեցէ՛ք, ու Անիկա ձեզի պիտի մօտենայ:

Թրգմ. Վ. Ս.

Ս. ԳՐԱԿԱՆ ՌԵՍՈՒՄԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Բրոֆ. «Ֆ. ՊէթէֆՍ»

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԱՌԱՋԻՆ ԷՋԸ

2. ԳԼՈՒԽ

ԲՈՅՍԸ

Աստուած ըսաւ, «Երկիր կանանց խոտ բուսցնէ, սերմ տուող խոտ, իր տեսակին՝ պէս պտուղ տուող պտուղներ ծառ, որ իր մէջ իր սերմ ունենայ երկրի վրայ» ու անպէս եղաւ: Եւ երկիր կանանց խոտ, իր տեսակին՝ պէս սերմ տուող խոտ եւ իր տեսակին՝ պէս սերմ ունեցող պտուղներ ծառ հանեց, ու Աստուած

տեսաւ որ քարի են: Եւ իրիկուն ու առառաւ ըլլալով՝ երրորդ օրը եղաւ... (Ծննդ. Ա. 11-13):

Թէեւ լոյսի, օդի եւ ցամաքի ստեղծագործութիւնը մեծ հրաշք մըն է, բայց կենանքի լոյս աշխարհի գալը հրաշքներու հրաշքն է: Որքա՛ն զարմանալի է, որ նիւթի միլիոնաւոր ան. կենդան մասնիկներ՝ անտեսանելի ուժէ մը կ'ստիպուին միանալ իւր եւ յօրինելու հրաշակերտ մը, — կենսաւոր մը, բոյս մը, — որ կ'ուտէ, կը խմէ, կը շնչէ, կ'աճի, կը սերնդագործէ, կը ծնւանայ ու կը տկարանայ եւ վերջապէս կը մեռնի:

Մեծ ու սքանչելի է Աստուծոյ այս ձեռակերտներուն այլազանութիւնը: Մօտաւորապէս 100,000 տեսակ բոյսեր կը ճանչնանք, բայց մեզի անձնած կը մնան դեռ շատեր որոնք անպատկերուն, լեռներու, գագաթներուն, ովկիանոսի խորքերուն եւ սղոտոր ջուրի կամիկներուն մէջ կ'ապրին: Եւ որքա՛ն այլազան է անոնց մեծութիւնը, կան սոյնքան փոքրներ, զորս միայն կատարեալագործութեամբ խոշորացոյցով տեսնել կարելի է եւ որոնց մէջ մենք անգիտակցաբար հազարաւորներ կը կանենք, երբ միայն մէկ ու միայն մենք մամուռ տառակի մը ջրէն: Սակայն ասոնց հակառակ՝ անդին կը բարձրանան հարիւրաւոր տարիներ համրող հսկայ ծառերը: Հոն արեւմտեան Ափրիկէի մէջ՝ վիթխարի հայապտղին (Ariocarpus) 36 ոտք թանձրութեամբ կը հասցնէ տրամագիծը իր բունին, որուն խաւերը համրելով՝ ձրան սացի ճամբորդ մը հաստատեց Թէ այդ ծառը Գրիստոսի ժամանակէն աճիլ սկսած է: Իսկ ասորին Քալիֆորնիոյ (Վեշինկիթո-նիայի) մէջ Մամուրեան ծառ կոչուածը 3,400 ոտք բարձրութիւն ունի: Յիշենք նաեւ «Հսկայ ծովաստղ» ըստաժը, որ Ալյուսկեան ովկիանոսին յատակին վրայ արմատացած է եւ անկէ աւելի քան հազար մէթր դէպի վեր բարձրանալով՝ իր ճիւղերը տարածած է ջրին սրտին վրայ, արեւի լոյսին առջեւ: Ան կազմած է ընդժովկայ ընդարձակ անդառներ, որոնց մէջ թռչուններու եւ եղջիկներու տեղ շանաձուկներու, փոկերու եւ ուրիշ ծովային կենդանիներու խումբեր կ'գործնուն:

Պակաս սքանչելի չէ նաեւ այլազանութիւնը հողին եւ կլիմային, որ բոյսերը կ'աճին: Ուռգութեամբ ըլլալով ստորերկրեայ ակերէն՝ արմաւենին կ'աճի Սահարայի ջերմ առազին մէջ, կիզիչ արեւին տակ. «Քանգի նա», ինչպէս արարը կ'ըսէ, «Կ'ուզէ իր գլուխը կրակին, իսկ ոտքը ջուրին մէջ ունենայ»: Իսկ անդին հիւսիսային բեռելին մօտակալքը, որ գիշերը քանի մը ամիս կը տեսնուի ու ցուրտը զերոյէն աւելի քան 50 աստիճան վար կ'իջնէ եւ ուր սառը պողպատի պէս կարծր՝ իսկ պողպատը սառի պէս դիւրարեկ կը դառնայ, այն ալ աղպիսի տեղի մը մէջ իսկ փափուկ, պզտիկ բոյսեր կը դիմադրեն բեռելային երկար գիշերներուն եւ սոսկալի ցուրտին: Եւ երբ՝ երկար բացաւ կայունէն յետոյ տեղեւոր արեւը դարձեալ փայլի, ապաւածի ձերպերուն մէջ մէկ մասնաջափ հողին վրայ կ'սկսին աճիլ քնքուշ մամուռը, փոքր սիրուն ծաղիկներ եւ երկրի ամենափոքր ծառը բեռելային ուռելին՝ մէկ ձեռք հասակով եւ մատիտի հաստութեամբ: Չարքաշ նաւաստիներ, որոնք պաշտօնի բերումով այս տխուր առանձնարաններուն մէջ կը դեգերին, կը պատմեն Թէ իրենք որքա՛ն կ'ուրախանան ի տես այդ փոքր բոյսերուն, որոնք նաեւ այդ յատկանշական ցուրտին մէջ Աստուծոյ սէրը կը պատմեն:

Բայց բոյսին իսկական հրաշալիքը իր սերմնն է. «Իր մէջ իր սերմը ունենայ երկրի վրայ»: Արդարեւ մեծ հրաշք մը: Փոքր սերմնախառնակը, զոր մեր երկու մասներուն ծայրերով կը բռնենք, ուժ ունի արտադրելու կատարեալ բոյս մը, արմատով,

ցողունով, տերեւներով եւ ծաղիկներով, բոյս մը, որ իր կարգին դարձեալ սերմ պետի արտադրէ: Քիչ մը նկատողութեամբ առնենք նաեւ Թիւրք խաշիւսաշի միակ հոռնոտ մը կ'աճի բոյս մը, որ իր մէջ 30,000 սերմնախառնակներ կը կրէ: Երբ ասոնք բոլորը սերմանալին ու խնամուին, երկրորդ սերունդին արդէն 900 միլիոն խաշիւսաշի տուններ պիտի ունենանք: Հաշուած է որ միայն մէկ հոռնոտ 5 տարուան մէջ ամբողջ երկիրը խաշիւսաշի տունով պիտի ծածկէր, եթէ գոյութիւն չունենային խափառարար պատճառներ: Ժընեւի փրօֆեսորներէն մին, Կարն գտած է Թէ միայն մէկ հատիկ սերմէն 10 տարուան մէջ արտադրուած ցորենը բաւական պիտի ըլլար երկրի բոլոր մարդիկը լման մէկ տարի կերակրելու: Ահա Աստուած աճման ու բազմացման այդպիսի ուժ մը դրած է բոյսի սերմին մէջ: Եւ խորհեցէ՛ք Թէ ի՞նչ հսկայ միջոց ուժ կը պահանջուի այս ամենախոշոր ու ամենափոքր միլիոնաւոր բոյսերը ի որոնկէն դէպի բարձրերը մղելու համար: Ասոր հետ բաղդատելով ի՞նչ է միջոց ուժը մեր բոլոր մեքենաներուն, որոնց կատարած գործը մեր զարմանքը կը գրաւէ: Ուստի երկիւղածութեամբ դիտէ՛ այն փոքր սերմը, որ հովէն քշուած՝ քու զգեստիդ մեկին վրայ կ'իջնայ պատահմամբ: Անոր մէջ ծածկուած է Աստուծոյ մէկ ուժը, որուն առջեւ կ'աներեւութանայ մարդկային բոլոր գործերը: Բայց եթէ տարրաւուծենք այդպիսի սերմ մը, անոր մէջ պիտի գտնենք միայն ալիւրի մի քանի հատիկներ, որոնք «Բիշիշ» կոչուած փոքր ու թափանցիկ պարկերու մէջ ամփոփուած են: Գիտնականները ճշգրտօրէն կը ճանչնան այն նիւթերը, որոնցմէ բաղադրուած են այդ հատիկները: Այսու հանդերձ չեն կրնար շինել անոնց մէկ հասն իսկ: Անոնք կրնան ցորենին հոռնոտին մէջ պարուսնակուած տարրերը ճշգրիտ համեմատութեամբ մէկ մէկու հետ բաղադրել, կրնան այդ բաղադրութիւնը ենթարկել արեւի լոյսին ու ջերմութեան եւ ելքարակնութեան. բայց անկարող պիտի ըլլան յառաջ բերելու նոյնիսկ ամենափոքր բոյս: Հոս ուշադրութեամբ առ կենանքի զարմանալի ու թաքուն ուժը, Աստուծոյ ուժը, որ սերմնախառնակին մէջ կը ծածկուի եւ վեր է մարդկային բոլոր գիտութենէն ու կարողութենէն:

Շատ դիմացկուն է սերմին մէջ ծածկուած այս փոքր, խոշորացոյցով իսկ հազիւ տեսանիլի կենսաւորը: Ամիսներ, քանի մը անտառային բոյսերունը նոյնիսկ 50 տարի, կը մնայ նա տեղ մը ցուրտն ու տաքը, ամառն ու ձմեռը կ'անցնին իր վրայէն, նոյն ժամանակամիջոցին կը ծնին ու կը մեռնին միլիոնաւոր մարդիկ, կը փոխուի պատմութեան դիմագիծը, իսկ անդին սերմնախառնակ փոքր կենսաւորը կը քնանայ: Բայց, երբ գտնէ յարմար հող, արեւի ջերմութիւնն ու անձրեւ, կ'արթննայ, կը ծիլի ու կ'աճի: Իր վրայ ծերութեան տկարութիւն չտեսնուիր երբեք: Շատոնց անհետացող կեղտերու գերեզմանոցներու մէջ գտնուած են առուոյտի հոռնոտի, որոնք մի քանի հարիւր տարուան հնութիւն ունին: Երբ անոնք ցանուցան յարմար հողի մէջ, այնպէս գեղեցիկ ծաղիկներ քաջին, ինչպէս կը բանան թարմը:

Ի՞նչ նպատակաւ ստեղծած է Աստուած բոյսը: Ան կերակրելու է մարդը եւ անհամար կենդանիները: Տէրը ըսաւ անոր. «Պէտք է որ դուն քարէն, հողէն ու ջուրէն արեւոյջ մարդկուսն եւ համար հաց պատրաստես: Եւ այն» անձայն ու լռիկ սկսաւ գործել բոյսը եւ հողէն արտադրեց հացահատիկ, ձէթ ու գինի, անուշահամ պտուղներ, ամէն կարգի համեմունք ու դեղորայք: Ան ամէն տարի կը պատրաստէ հազարաւոր միլիոն թփեր, գարի, բրինձ, եգիպտացորեն, գետնախնձոր, սուրճ, քաքառ, Թէյ ու միլիոնաւոր լիթր գինի եւ կը մանէ քանի մը միլիառ երկայնութեամբ բամբակ ու կանեփ: Որպիսի՝ մեծ սո

գեղեցիկ գործունէութիւն այս լռիկ արարածներուն համար:

Մեզի պահուած է նաեւ առաջին բուսական աշխարհը, զոր Աստուած ստեղծած է երրորդ օրուան մէջ: Մեր երկրի հողին ու ապառաժին նախնական խաւերուն տակ՝ անխաղաղ վիճակի մէջ կը գտնուին վիթխարի զանգուածներ բոյսերու, որոնց նոյնիսկ բունն ու ոստերը, տերեւներն ու պտուղները յաճախ զանազանիկ կարելի է: Հանքածուխ անուներ կուտանք քարացած այս բոյսերու դէզերուն, ուր մարդու կամ կենդանիի ոսկոր մը իսկ զգանուի, ինչ որ կ'ապացուցանէ թէ Սուրբ Գրոց բնածին համաձայն՝ անոնք այդ ատեն դեռ ստեղծուած չէին: Երկրի այլ եւ այլ տեղերուն մէջ 40 ոտք թանձրութեամբ խաւեր կը կազմէ այս հանքածուխը. միայն Անգլիոյ մէջ անկէ տարին 60 միլիոն թմօ կը հանուի եւ հաշուուած է որ հին դեռ 500 մարդուան պաշար կայ՝ ասկէ ետքն ալ նոյն քանակութեամբ շահաւորելու պայմանաւ: Հիւսիսային Ամերիկա ու Չինաստան, ուր մարդիկ 2000 տարի առաջ իսկ հանքածուխ կը վառէին, ինչպէս նաեւ Աստուրիա, վիթխարի պաշարներ կան այս վառելանիւ: Թէն: Ասոնք բոլորն ալ մնացորդներն են երրորդ օրուան մէջ ստեղծուած բոյսերուն, որոնք տիզմի, աւազի եւ ապառաժի տակ մնացած են եւ երկրի կեդրոնական ջերմութենէն հեռու հետէ անխաղաղ:

Այդ հսկայ տունկերու աննայածիր անտառներուն մէջ թէն: Եւ անտառն ալ կը սուլէր ու կը մոնչէր հովը, բայց դեռ չէր լուրեր քաղցրահնչիւն դայլայլումը թռչնոց եւ չէր տեսնուեր ոստոստումը ջորքոտանեաց ու ծառն ի վեր մազկցումը բզէզներու եւ թրթուրներու, վասն զի դեռ ոեւէ կենդանական շունչ ունեցող գոյութիւն չուներ:

Ընթերցող, եթէ հիմա ձեռքդ կտոր մը հանքածուխ առնես, խորհէ՛ թէ կը բռնես կտոր մը այն ծառերէն, որոնք ատենօք երկրին վրայ կ'աճէին, երբ դեռ արեւն ու լուսինը չէին երևնար, եւ երբ Առաքի հոգին դեռ Աստուածութեան մէջ կը հանգէր: Եւ երբ դուն դէպի ետ անցեալ հազարամեակներուն նայած ես, յետոյ նայէ նաեւ դէպի յառաջ այն ժամանակին, երբ պիտի անցնին երկիրը եւ ինչ որ անոր վրայ գոյութիւն ունի. բայց մեզի խոստացուած է նոր երկիր մը, որու վրայ բոյսերը պիտի աճին ու ծաղկին մեր երեսակայածէն ալ աւելի փառաւոր եւ կենաց ծառը իր ժամանակին իր պտուղը պիտի տայ ու անոր տերեւները ժողովուրդներու բժշկութիւն պիտի ըլլան. (Յայտ. ԻԲ. 2):

(Նար.)

Թարգմ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՎԵՐ. ՅԱԿՈԲ ԵՂԻԱԶԱՐԵԱՆԻ

Յունիս 15 ի Կիրակի օրը կէսօրէն յետոյ ժամը հինգեկէսին Գերմանիոյ Ֆրանքֆուրտ ամ Մայն քաղաքին մէջ, պարագաներու բերումով իր հօտէն հեռու՝ ձեռնադրութիւնը տեղի ունեցաւ Վեր. Յակոբ Եղիազարեանի «Բրիտտո» եկեղեցւոյ մէջ, հո՞ծ բազմութեան մը ներկայութեամբ:

Ձեռնադրութիւնը կատարեցին գերման Վեր. Հարպէք (Հիւլֆսպուլտի հայասէր ընկերութեան նախագահը), Վեր. Թէօմըլ (Քրիստոսի եկեղեցւոյն հովիւ), Վեր. Սիլման (Իբր Բարեկարգեալ Աւետ. եկեղեցւոյ ներկայացուցիչ) եւ Վեր. Յ. Ն.

Հաղարտեան (Իբր ներկայացուցիչ Հայ Աւետարանական եկեղեցւոյ): Ձեռնադրութեան վայր ընտրուած էր «Բրիտտո» եկեղեցին, որովհետեւ անոր սրտմտկան Երիցատան մէջն էր որ ասկէ 35 տարիներ առաջ հիմը դրուեցաւ «Հիւլֆսպուլտ» Միսիոնարութեան, որ այն օրէն սկսեալ մինչեւ այժմ Հայոց մէջ գոյծած եւ մեծ ծառայութիւններ մատուցած է իր որբանոցներով, հիւանդանոցներով, անկեղանոցներով, դպրոցներով ու նախկին Սէմինարով եւ զուտ աւետարանչական աշխատութեամբ:

Վեր. Յակոբ Եղիազարեան անցն Սէմինարի (վարժապետանոց) 1911 ի յաջող շրջանաւարտներէն մին է, որ նոյն տարիէն սկսեալ 13 տարիներ որպէս ուսուցիչ զանազան տեղերու մէջ աշխատելէ յետոյ 6 տարիէ ի վեր Քաղաքացի մէջ աւետարանչութիւնով կարգէր Հիւլֆսպուլտի ձեռքին տակ: Վերջին 6 տարիները Գերմանիոյ անցուցած էր ուսանելու, որ ատեն Քաղաքացի մէջ գտնուած Հայ աւետ. համայնքի խնդրոնքին վրայ եւ Վեր. Ընթերցողի ու Վեր. Սթամպուլեանի (Յունաստանի նախկին եւ ներկայ միութեանց նախագահներն) դրաւր հաւանութեամբ ձեռնադրուեալ:

Ձեռնադրութիւնէն շաքաթ մը յետոյ Վեր. Եղիազարեան իր հօտին կը գտնուի Քաղաք, հոն Աւետարանի գործը վերսկսելու: Կը մտնէր Տէրաջը Հոգիին զօրութիւնը իրեն ու իր հօտին. (Բ. Տրմ. Ա. 7):

«ԱՆԱՊԱՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ»

Կարգացէ՛ք «Անապաստի Եկեղեցին» Փրանսական Աւետարանական Եկեղեցիի կրած հալածանքներն ու վիշտերը եւ Աւետարանի յողթութեան պատմութիւնը: Լոյս տեսած է 15 գեղեցիկ պատկերներով եւ գեղեցիկ կազմով, 112 էջ: Գինը Փրանսայի եւ Սուրիոյ համար 6 Ֆրանք, իսկ արտասահման 30 Սէնթ: Ունենալ փափաքողներ թող հաճին դիմել խմբագրութեանս հասցէին:

ՈՍԿԵԶՈՐ ՍՈՒՐԲ ԳՐԲԵՐ

Մեր քով կան ոսկեգօծ Սուրբ Գրքեր, կաշեկազմ եւ ծայրերով, գրպանի համար եւ միջակ: Իսկ վկայութիւնով կաշեկազմ, կակուղ կամ զօրաւոր կողքով ու ամպլոնի Սուրբ Գրքեր ոսկեգօծ կամ պարզ, կարելի է կարճ ժամանակամիջոցի մէջ հայթայթել: Ապսպրանքներ ընդունելի են:

Ունինք նաեւ զրաբար Ս. Գրքեր խոշորադիր: Այսպիսի Սուրբ Գրքեր եւ հոգեւոր զրքեր ունենալ փափաքողներ թող հաճին դիմել Կիւլշան Պատաքեանի, «Բանբեր»ի հասցէով:

Le Gérant : Mr. le PASTEUR KALTENBACH

Տպգր. «ԲԱՆԲԵՐ»ի, 7, Բիւ Բաբեր